Արտաքին հարաբերություններ

1. Մարդասիրական օգնություն

Ներածություն

Մարդասիրական օգնության բնագավառում ԵՄ օրենսդրությանը համապատասխան ՀՀ նորմատիվ իրավական ակտեր գոյություն չունեն:

Այնուամենայնիվ, Հայաստանն իրականացնում է երրորդ երկրներում մարդասիրական օգնության նպատակով առանձին միջոցառումներ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա:

Մարդասիրական օգնության բնագավառում Եվրամիության օրենսդրությունը սահմանում է մարդասիրական օգնության քաղաքականության ընդանուր իրավական հիմքերը, որի նպատակն է օգնություն տրամադրել երրորդ երկրների քաղաքացիներին, ովքեր բնական աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ, երաշտ, փոթորիկ), մարդածին աղետների (պատերազմ, հակամարտություն, կռիվների բռնկում), կառուցվածքային ճգնաժամերի (քաղաքական, տնտեսական կամ սոցիալական խոր ճգնաժամ) զոհ են դարձել: Սույն ենթագլխում կարգավորվում են նաև այդ երկրներում վերակառուցման և վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով ֆինանսական աջակցության տրամադրման խնդիրները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Մարդասիրական օգնություն» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2008 թվական

Մարդասիրական օգնության բնագավառում ՀՀ օրենսդրությունը ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվեն «Հումանիտար օգնության մասին» օրենքի և «Երրորդ երկրներում վերակառուցման և վերականգնման աշխատանքների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծեր, որոնք կհիմնվեն Եվրոպական խորհրդի 1996թ. հունիսի 20-ի թիվ 1257/96 կանոնակարգի և Եվրոպական խորհրդի 1996թ. նոյեմբերի 22-ի թիվ 2258/96 կանոնակարգերի դրույթների վրա[1]:

[1] 1996թ. հունիսի 20-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 1257/96/EC՝ «Մարդասիրական օգնության մասին», 1996թ. նոյեմբերի 22-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 2258/96՝ «Զարգացող երկրներում վերակառուցման և վերականգնման աշխատանքների մասին»:

1.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2008			
1.	«Հումանիտար օգնության մասին» օրենքի նախագծի մշակում	1996թ. հունիսի 20-ի «Հումանիտար օգնության մասին» Խորհրդի թիվ 1257/96 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, (ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի փրկարար ծառայություն)	1-ին եռամսյակ	18	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Երրորդ երկրներում վերակառուցման և վերականգնման աշխատանքների մասին» կառավարության որոշման նախագծի մշակում	1996թ. նոյեմբերի 22-ի «Զարգացող երկրներում վերակառուցման և վերականգնման աշխատանքների մասին» Խորհրդի թիվ 2258/96	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, (ՀՀ արտաքին գործերի նախարարութուն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկաի նախարարություն, Հայաստանի փրկարար ծառայություն)	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					33	

1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[2]

0	1	2	3	4
NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	ԵՄ-ի արտաքին կապերի ոլորտի հումանիտար օգնության բնագավառում քաղաքականության և օրենսդրության կիրառման վերաբերյալ դասընթաց (3 օր / 2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	ԵՄ զարգացման համագործակցության (զարգացող երկրներում վերակառուցման և վերականգնման աշխատանքների) քաղաքականության վերաբերյալ դասընթաց (3 օր / 2008թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[2] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

2. Արտաքին առևտուր

Ներածություն

Արտաքին առևտրի բնագավառում Եվրամիությունը մշակել է մի շարք գործիքներ, որոնք նպատակաուղղված են Եվրոպական մաքսային միության և առևտրի ընդհանուր քաղաքականության շրջանակներում իրականացնելու միասնական սակագնային քաղաքականություն[3], սահմանելու արտահանման և ներմուծման համար ընդհանուր կանոններ[4]: Այդ գործիքները պաշտպանում են Համայնքի տնտեսավարող սուբյեկտներին երրորդ երկրներում առաջացած առևտրային խոչընդոտներից՝ նպատակ ունենալով միջազգային առևտրի կանոնների համաձայն՝ վերացնելու արդյունքում հասցվող վնասը կամ առևտրի վրա ազդեցություն ունեցող անուղղակի խոչընդոտները, ինչպես նաև սահմանում են սակագնային արտոնությունների գլխավոր համակարգ այլ զարգացող երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանն արտահանման և ներմուծման ոլորտներում իրականացնում է ազատական արտաքին տնտեսական քաղաքականություն և մոտակա ապագայում չի նախատեսում սահմանել արտոնությունների գլխավոր համակարգ (ԱԳՀ), որի նպատակն է արտադրված ապրանքների և որոշակի գյուղատնտեսական ապրանքների համար սակագների նվազեցումը (հիմնականում զարգացած երկրները տրամադրում են զարգացող երկրներին), արտահանման ռեժիմի[5] և առևտրի և զարգացում[6] բնագավառները սույն ծրագրի շրջանակներում չեն քննարկվում:

Հայաստանի Հանրապետությունում արտաքին առևտրի բնագավառի օրենսդրությունը ներառում է «Հակագնագցման (հակադեմպինգային) և փոխհատուցման մասին», «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքները, 2004 թվականի սեպտեմբերի 8-ի՝ «Քանակական սահմանափակումների և սակագնային քվոտաների կիրառման դեպքում ներմուծման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1161-Ն որոշումը: Ինչպես պարզվում է համեմատական վերլուծության արդյունքներից, «Հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման մասին» ՀՀ օրենքը հիմնականում համապատասխանում է ԵՄ օրենսդրության[7] պահանջներին, սակայն ՀՀ համապատասխան նորմատիվ իրավական ակտերում միջանկյալ վերաքննություն անցկացման, հակագնագցման և (կամ) փոխհատուցման տուրքի սահմանման և դրա վերադարձման հետ կապված դրույթները և որոշ այլ դրույթներ չեն համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին կամ մասնակի են համապատասխանում դրանց:

Ներքին շուկայի պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենսդրությունը որոշ իրավահարաբերությունների կարգավորման առումով տարբերվում է ԵՄ օրենսդրությունից: Մասնավորապես, բացակայում են կամ չեն համապատասխանում այնպիսի դրույթներ, ինչպիսիք են նախնական դիտանցման, էական ներմուծման վերաբերյալ նորմերը, հանրային լսումների անցկացման կարգը և այլն:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն ավիացիայի բնագավառում անբարեխիղճ գնային գործելակերպի դեմ պայքարի և արտաքին շուկաներում տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրների իրավական կարգավորման մեխանիզմները:

2007 թվական

Ներքին շուկայի պաշտպանության և առևտրի պաշտպանական միջոցառումների բնագավառում ԵՄ 1997թ. հոկտեմբերի 6-ի թիվ 2026/97 և Եվրոպական խորհրդի 1995թ. դեկտեմբերի 22-ի թիվ 384/96 կանոնակարգերի դրույթներին ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ներքին շուկայի պաշտպանության մասին»[8] և «Հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման մասին»[9] ՀՀ օրենքներում:

Ներմուծման ռեժիմի քանակական քվոտայի կառավարման համակարգի հստակեցման նպատակով համապատասխանեցման ենթակա է Եվրոպական խորհրդի 1994թ. մարտի 7-ի թիվ 520/94 կանոնակարգը[10]:

---

[3] Սակագնային քաղաքականության վերաբերյալ ԵՄ օրենսդրական ակտերը ներառված են «Մաքսային խնդիրներ» գլխում:

[4] Սրա նպատակն է սահմանելու արտահանման և ներմուծումների ազատության սկզբունքի վրա հիմնված Եվրոպական համայնքից (ԵՀ) իրականացվող արտահանումների և ներմուծումների համար ընդհանուր կանոններ և անհրաժեշտության դեպքում իրականացնելու պահանջվող պաշտպանական միջոցառումները և հսկողությունը:

[5] 1969թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 2603/69՝ «Արտահանման ընդհանուր կանոնները սահմանելու մասին»:

[6] 2001թ. դեկտեմբերի 10-ի կանոնակարգ թիվ 2501/2001՝ «Եվրոպական խորհրդի 2002թ. հունվարի 1-ից 2004թ. դեկտեմբերի 31-ը սակագնային (տարիֆային) արտոնությունների ընդհանուր համակարգի կիրառման մասին»:

[7] 1997թ. հոկտեմբերի 6-ի Եվրոպական խորհրդի կանոնակարգ թիվ 2026/97՝ «Եվրահամայնքի անդամ պետություն չհանդիսացող երկրներից սուբսիդավորված ներմուծումից պաշտպանելու մասին»,
1995թ. դեկտեմբերի 22-ի Եվրոպական Խորհրդի կանոնակարգ թիվ 384/96՝ «Եվրահամայնքի անդամ պետություն չհանդիսացող երկրներից գնագցող ներմուծումներից պաշտպանելու մասին»:

[8] ՀՕ-175, 18.04.2001թ.:

[9] ՀՕ-385, 19.06.2002թ.:

[10] 1994թ. մարտի 7-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 520/94՝ «Քանակական քվոտաների կառավարման նպատակով Համայնքի ընթացակարգի սահմանման մասին»:

Այդ նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Քանակական սահմանափակումների և սակագնային քվոտաների կիրառման դեպքում թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման[11] մեջ:

2008 թվական

Առևտրի պաշտպանական միջոցառումների բնագավառում ավիացիայի ոլորտում անբարեխիղճ գնային գործելակերպի դեմ պաշտպանության և արտաքին շուկաներում տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության խնդիրները կանոնակարգելու նպատակով կմշակվեն «Ավիացիայի բնագավառում անբարեխիղճ գնային գործելակերպի դեմ պաշտպանության մասին» և «Միջազգային առևտրի կանոնների ներքո արտաքին շուկաներում ՀՀ տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության մասին» օրենքների նախագծերը՝ հիմնված Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 21-ի թիվ 868/2004 կանոնակարգի[12] և Խորհրդի 1994թ. դեկտեմբերի 22-ի թիվ 3286/94 կանոնակարգի հիմնադրույթների վրա[13]:

[11] 1164-Ն, 22.07.2004թ.:

[12] 2004թ. ապրիլի 21-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կանոնակարգ թիվ 868/2004՝ «Համայնքի ավիափոխադրողներին վնաս հասցնող՝ Եվրահամայնքի ոչ անդամ երկրներից սուբսիդավորված վիափոխադրումային ծառայություններ տրամադրողների և անբարեխիղճ գնային գործելակերպի դեմ պաշտպանության մասին»:

[13] 1994թ. դեկտեմբերի 22-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3286/94՝ «Միջազգային առևտրի կանոնների, հատկապես ԱՀԿ կանոնների ներքո համայնքի իրավունքների ապահովման նպատակով միասնական առևտրային քաղաքականության ոլորտում համայնքի ընթացակարգերի սահմանման մասին»:

2.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1994թ. դեկտեմբերի 22-ի «Ներմուծման ընդհանուր կանոնները սահմանելու մասին» Խորհրդի թիվ 3285/94 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	1-ին եռամսյակ	42	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Հակագնագցման (հակադեմպինգային) և փոխհատուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	1997թ. հոկտեմբերի 6-ի «Եվրոհամայնքի անդամ պետություն չհանդիսացող երկրներից սուբսիդավորված ներմուծումներից պաշտպանելու մասին» Խորհրդի թիվ 2026/97 կանոնակարգ 1995թ. դեկտեմբերի 22-ի «Եվրոհամայնքի անդամ պետություն չհանդիսացող երկրներից գնագցող ներմուծումներից պաշտպանելու մասին Խորհրդի թիվ 384/96 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	120	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	«Քանակական սահմանափակումների և սակագնային քվոտաների կիրառման դեպքում թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակում	1994թ. մարտի 7-ի «Քանակական քվոտաների կառավարման նպատակով Համայնքի ընթացակարգի սահմանման մասին» Խորհրդի թիվ 520/94 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	33	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

ԸՆԴԱՄԵՆԸ					195	
2008						
5.	«Ավիացիայի բնագավառում անբարեխիղճ գնային գործելակերպի դեմ պաշտպանության մասին» օրենքի նախագծի մշակում	2004թ. ապրիլի 21-ի «Համայնքի ավիափոխադրողներին վնաս հասցնող՝ Եվրահամայնքի ոչ անդամ երկրներից սուբսիդավորված ավիափոխադրումային ծառայություններ տրամադրողների և անբարեխիղճ գնային գործելակերպի դեմ պաշտպանության մասին» Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի թիվ 868/2004 կանոնակարգ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)	4-րդ եռամսյակ	27	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	«Միջազգային առևտրի կանոնների ներքո արտաքին շուկաներում ՀՀ տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի նախագծի մշակում	1994թ. դեկտեմբերի 22-ի «Միջազգային առևտրի կանոնների, հատկապես ԱՀԿ կանոնների ներքո համայնքի իրավունքների ապահովման նպատակով միասնական առևտրային քաղաքականության ոլորտում համայնքի ընթացակարգերի սահմանման մասին» Խորհրդի թիվ 3286/94 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	36	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					63	
ԸՆԴԱՄԵՆԸ					258	

2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ[14]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ արտաքին տնտեսական քաղաքականության վերաբերյալ դասընթաց (3 օր / 2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ հակագնագցման (հակադեմպինգային) քաղաքականության վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ հակասուբսիդավորմանն ուղղված միջոցառումների կիրառման վերաբերյալ դասընթաց (3 օր/ 2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ պաշտպանական միջոցառումների վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ ներմուծման ընդհանուր կանոնների և քանակական քվոտաների կառավարման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
6.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Միջազգային առևտրի կանոնների, ներքո համայնքի իրավունքների ապահովման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2008թթ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
7.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն)		ԵՄ ավիավիայի բնագավառում անբարեխիղճ գնային գործելակերպի դեմ պաշտպանության վերաբերյալ դասընթաց (5 օր / 2008թթ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[14] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ: